

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Գնում. **Հիվանդությունների վերահսում և կանխարգելում ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) ՀՀ Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հեղինակային հսկողություն**

Պայմանագրի համարը՝ EFSD/COVID/QCBS/A-C/001-21

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Եվրասիական Կայունացման և Զարգացման Հիմնադրամից ստացել է (այսուհետ՝ «ԵԿԶՀ») 3,000,000.00 (երեք միլիոն) ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ «Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակի պատրաստվածության մակարդակի բարձրացում. կորոնավիրուսից առաջացող սպառնալիքի հայտնաբերում եվ արձագանքում» ծրագրի ֆինանսավորման համար և նախատեսում է այդ միջոցների մի մասն ուղղել **Հիվանդությունների վերահսում և կանխարգելում ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) ՀՀ Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հեղինակային հսկողության** խորհրդատվական ծառայությունների վճարման նպատակով:

Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ») ներառում են.

Նախագծում

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սեյսմիկ չափանիշներին համապատասխան՝ շենքերի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության հետազոտում, որին կհաջորդի հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացության կազմում: Ինժեներական և գեոդեզիական (անհրաժեշտության դեպքում, երկրաբանական) հետազոտությունների իրականացում, տարածքների գեոդեզիական հետազոտություն, ջրամատակարարման և կոյուղու առկա հաղորդակցության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

Նախնական ծավալա-հատակագծային լուծումներ և ֆունկցիոնալ նախագծերի մշակում երկու կենտրոնների վերակառուցման համար, (էսքիզային հատակագծում ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար):

2. Նախագծի ինժեներական բաժինների նախնական մշակում, տեխնոլոգիական մասի, շրջակա միջավայրի պաշտպանության, բարեկարգման, արտաքին լուսավորության, շինարարական աշխատանքների կազմակերպման, լոկալ, օբյեկտային և ամփոփ նախահաշիվների, ծավալաթերթի, բնութագրերի և բացատրական նշումների մշակում նախագծի բոլոր բաժինների համար, ներառյալ նախնական ծախսերի նախահաշիվը:

3. Նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական վերջնական փաթեթի մշակում ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի համար Շինարարական աշխատանքների իրականացման տևողությունը պետք է արտացոլված լինի շինարարության աշխատանքների կազմակերպման նախագծում (ՇԿՆ):

Նախագծման ընդհանուր տևողությունը հինգ ամիս է՝ Խորհրդատուի հետ պայմանագրի կնքման օրվանից:

Հեղինակային հսկողություն

Հեղինակային հսկողությունն իրականացվում է վերակառուցման աշխատանքների ամբողջ ընթացքում: Հեղինակային հսկողության ընդհանուր տևողությունը մոտ 1 տարի, որը կսկսի վերակառուցման աշխատանքների սկզբից:

Տեխնիկական Առաջադրանքը կցվում է սույն Հետաքրքրության Հայտերի Ներկայացման Հրավերին:

«Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկը, հանդես գալով որպես Ծրագրի համակարգող խումբ (ԾՀԽ), սույնով հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին՝ ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը՝ Ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված մասնակիցները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որը հաստատում է իրենց համապատասխանությունը ստորև ներկայացված որակավորման չափանիշներին: Մասնակցի հետաքրքրության հայտը պետք է պարունակի հետևյալը՝

- Ընդհանուր տեղեկություններ ընկերության մասին և ընկերության կողմից մատուցվող ծառայությունների նկարագրություն;
- Ընկերության կողմից իրականացված և իրականացվող ծրագրերի, աշխատանքների ծավալների, ընկերության՝ վերջին 5 (հինգ) տարիների պատվիրատուների վերաբերյալ տվյալներ;
- Հիմնական գրանցված անձնակազմի և Ծրագրի շրջանակներում Ծառայությունների մատուցման թիմի կազմի վերաբերյալ տվյալներ;
- Նախագծման համար անհրաժեշտ լիցենզիայի, վկայագրերի և մրցույթին առնչվող այլ փաստաթղթերի առկայություն;
- Ընկերության կոնտակտային տվյալներ:

Որակավորման չափանիշներ.

- (i) Նախագծման և ճարտարապետության ոլորտում առնվազն 10 տարվա փորձ;
- (ii) Բժշկական հաստատությունների նախագծման փորձ վերջին 8 տարիների ընթացքում՝ համապատասխան նախագծված և/կամ կառուցված հաստատությունների ցանկով՝ պատվիրատուների կողմից տրված առկա երաշխավորագրերով (աշխատանքների ծավալի մասին նշումով);
- (iii) Խորհրդատուի անձնակազմում պահանջվող ոլորտում որակավորված փորձագետների առկայություն՝ համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթությամբ և խորհրդատվական ծառայությունների մատուցման փորձով:

Գնումն իրականացվելու է «Որակի և գնի վրա հիմնված ընտրություն» (QCBS) մեթոդի կիրառմամբ՝ ԿԶԵՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի Գնումների Քաղաքականության (2018թ. նոյեմբեր) և ԿԶԵՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի Գնումների Ընթացակարգերի (2018թ. նոյեմբեր), որոնք հրապարակված են Եվրասիական Զարգացման Բանկի՝ ԿԶԵՀ-ի միջոցների Կառավարչի, կայքում և ԿԶԵՀ-ի կայքում:

Մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն կամ համագործակցել ուրիշ մասնակիցների հետ: Համագործակցության դեպքում մասնակիցները պետք է նշեն միավորման ձևը (կոնսորցիում կամ ենթախորհրդատու):

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել հեռախոսով կամ էլ-հասցեով՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00-ն: Կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն հայերեն կամ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ Adobe PDF և Word տարբերակով՝ ստորև նշված էլեկտրոնային հասցեներով ոչ ուշ քան **2021թ. Դեկտեմբերի 2-ը**: Նամակի «Թեմա» տողում պետք է նշված լինի. *Հետաքրքրության հայտ- «Հիվանդությունների վերահսում և կանխարգելում ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) ՀՀ Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հեղինակային հսկողություն», EFSD/COVID/QCBS/A-C/001-21:*

ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Երվանդ Էլիբեկյան, Տնօրեն

Քրիստինե Ղանբարյան, Գնումների մասնագետ

Հեռ. (+374 10) 297536, 297537

Էլ-հասցե՝ Email: info@healthpiu.am; kristine.ghambaryan@healthpiu.am;

կայք՝ www.healthpiu.am

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հիվանդությունների վերահսում և կանխարգելում ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) ՀՀ Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հեղինակային հսկողություն

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը պարբերաբար բարեփոխումներ է իրականացնում՝ ուղղված բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը:

Այս Ծրագիրը կարևոր դեր է խաղում COVID-19 համավարակի բռնկման դեմ ուղղված ՀՀ կառավարության ռազմավարական պատրաստվածության և արձագանքման ծրագրի իրականացման գործում, ներառյալ՝ կորոնավիրուսի հայտնաբերման և ախտորոշման ծառայությունների կարողությունների, ինտենսիվ թերապիայի ծառայությունների հզորացումը, անհրաժեշտ բժշկական միջոցների գնումը՝ սարքավորումներ և պարագաներ, ախտորոշման և բուժման նպատակով, բուժաշխատողների պաշտպանվածության կազմակերպումը, հասարակության իրազեկվածության բարձրացումը, բուժաշխատողների ուսուցումը վիրուսների / վարակների վերահսկման, հիվանդների տեսակավորման և վարման վերաբերյալ և այլն:

Ներկայում, գլոբալ համավարակի պայմաններում, Հայաստանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում, կորոնավիրուսի դեպքերի աճող թվի պայմաններում, և, հաշվի առնելով COVID-19-ի սպառնալիքին արձագանքելու խնդրի արդիականությունը, առաջարկվում է՝ իրականացնել այս Ծրագիրը:

Առաջարկվող Ծրագիրը համահունչ է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի և ԵՄ դրամաշնորհային ծրագրի հետ, որոնք այս փուլում աջակցում են ՀՀ կառավարությանը՝ իրականացնել միջոցառումներ արագ արձագանքելու COVID-19-ի սպառնալիքին:

Արտակարգ միջոցառումներ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել ԿԶԵՀ-ից՝ 3,0 մլն ԱՄՆ դոլարի չափով, COVID-19-ի դեմ պայքարի միջոցառումները բարելավելու համար և մտադիր է դրամաշնորհի մի մասը՝ շուրջ 1.5 մլն ԱՄՆ դոլար, ներդնել ՀՎԿԱԿ երկու մասնաճյուղերի մասնաշենքերի վերակառուցման համար՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում:

Ծրագրի նպատակն է. COVID-19 գլոբալ համավարակի պայմաններում բժշկական օգնության շարունակականության, ինչպես նաև հիվանդության տարածման սպառնալիքին արագ արձագանքելու ապահովում (կորոնավիրուսով հիվանդների ժամանակին հետազոտում և բուժում):

Նախատեսվում է բարձրացնել վարակի կանխարգելման և վերահսկման գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ՀՎԿԱԿ երկու մարզային մասնաճյուղերի արդիականացման միջոցով (իրականացնելով մասնաշենքերի վերակառուցման և ժամանակակից սարքավորումներով հագեցման աշխատանքներ):

1. ՀՀ Արարատի մարզի մասնաճյուղը գտնվում է՝ քաղաք Արտաշատ, Ա. Խաչատրյան փող., 120 հասցեում:
2. ՀՀ Արմավիրի մարզի մասնաճյուղը գտնվում է՝ քաղաք Վաղարշապատ, Սպանդարյան փող., 1 հասցեում:

Արդիականացման իրականացման կարգը

Արդիականացումը կիրականացվի երեք փուլով.

Փուլ 1. ՆՆՓ մշակում: ՀՎԿԱԿ մասնաճյուղերի մասնաշենքերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթի մշակման նպատակով՝ Խորհրդատուի ընտրություն մրցութային կարգով: Նախագծման և աշխատանքային փաթեթի պատրաստումն իր մեջ պետք է ներառի՝ ճարտարապետական, կոնստրուկտորական և ինժեներական աշխատանքային հատակագծերի փաստաթղթեր, լրկալ և ամփոփ նախահաշիվներ, ճշգրիտ ծավալաթերթեր և մանրամասն մասնագրեր:

Փուլ 2. Վերակառուցում: Կապալառուի ընտրություն՝ մասնաշենքերի վերակառուցման աշխատանքներն իրականացնելու նպատակով: Շինարարական աշխատանքների տևողությունը սահմանվում է շինարարության կազմակերպման հատորում՝ նախագծողի կողմից ներկայացված աշխատանքների կատարման գրաֆիկին համապատասխան: Վերակառուցման աշխատանքների ամբողջ ընթացքում Խորհրդատուի կողմից պետք է իրականացվի շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն:

Փուլ 3. Բժշկական սարքավորումների և կահույքի մատակարարում, տեղադրում և շահագործում, սարքավորումների շահագործման կանոնների վերաբերյալ անձնակազմի ուսուցում (Սարքավորումների նախնական ցանկը՝ տեխնիկական մասնագրերով կցված է Հավելված 3-ում):

Երկարաժամկետ արդյունք. Վարակների կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարձրացում, կորոնավիրուսով և այլ վարակիչ հիվանդություններով վարակման դեպքերի նվազեցում:

Բ. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առաջադրանքի նպատակն է.

- ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի վերակառուցման ՆՆՓ մշակում. Աշխատանքային հատակագծերի փաթեթ, ճարտարապետական, նախագծային, ինժեներական փաստաթղթերի ծավալներ, բացատրական նշումներ, բնութագրեր, լրկալ, օբյեկտային և ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթեր:
- Մասնաշենքերի վերակառուցման շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում հեղինակային հսկողության իրականացում:

Գ. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Խորհրդատուն պատասխանատու է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի ՆՆՓ վերջնական փաթեթի մշակման համար: ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերը բաղկացած կլինեն ստորև ներկայացված բաժանմունքներից և ծառայություններից.

ՀՀ Արարատի մարզի «Արարատ» մասնաճյուղ (շուրջ 870.0 քմ)

- Ընդունարան (լաբորատոր նմուշների ընդունում, գրանցում, մշակում, լաբորատոր նյութերի պահեստավորման սենյակ և այլն),

- Լաբորատոր բաժանմունք (բաղկացած ՊՇՌ, մանրէաբանական, քիմիական և մակաբուժաբանական լաբորատորիաներից),
- Վարչական մաս
- Օժանդակ ծառայություններ

ՀՀ Արմավիրի մարզ «Արմավիր» մասնաճյուղ (շուրջ 895.0 քմ)

- Ընդունարան (լաբորատոր նմուշների ընդունում, գրանցում, մշակում, լաբորատոր նյութերի պահեստավորման սենյակ և այլն),
- Լաբորատոր բաժանմունք (բաղկացած ՊՇՌ, մանրէաբանական, քիմիական և մակաբուժաբանական լաբորատորիաներից),
- Վարչական մաս
- Օժանդակ ծառայություններ:

Նախագծման փաստաթղթերը պետք է պատրաստվեն՝ համաձայն.

- Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության
- Հայաստանի Հանրապետությունում ընդունված նախագծման նորմերի
- Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական հաստատությունների միջազգային չափանիշների
- Շենքերի, շինությունների և ինժեներական սարքավորումների էներգաարդյունավետության ոլորտում ժամանակակից համաշխարհային չափանիշների

Դ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՎԱԼԸ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի մշակումը Խորհրդարանի կողմից (նախագծային կազմակերպություն) կիրականացվի երեք փուլով

Փուլ 1. ՀՀ տարածքում գործող սեյսմիկ չափանիշներին համապատասխան՝ շենքերի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության հետազոտում, որին հաջորդում է հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացության կազմում: Ինժեներական և գեոդեզիական (անհրաժեշտության դեպքում, երկրաբանական) հետազոտությունների իրականացում, տարածքների գեոդեզիական հետազոտություն, ջրամատակարարման և կոյուղու առկա հաղորդակցության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: Նախնական նախագծերի լուծումներ և ֆունկցիոնալ նախագծերի մշակում երկու կենտրոնների վերակառուցման համար, (էսքիզային հատակագծում ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար):

Փուլ 2. Նախագծի ինժեներական բաժինների նախնական մշակում (ընդհանուր բացատրական նշումներ բոլոր մշակվող հատվածների համար, ճարտարապետական և կառուցվածքային մասի, ջեռուցման և օդափոխության, ջրամատակարարման և կոյուղու, էլեկտրամատակարարման և ցածրավոլտ ցանցերի, հեռախոսային ցանցի, ներքին կապի, համացանցի, հրդեհային ազդարարման և հրդեհաշիջման համակարգի, արտաքին ցանցերի՝ (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրաէներգիա, գազամատակարարում), տեխնոլոգիական մասի, շրջակա միջավայրի պաշտպանության, բարեկարգման, արտաքին լուսավորության, շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծեր, լոկալ, օբյեկտային և ամփոփ նախահաշիվներ, նախագծի բոլոր բաժինների համար ամփոփ ծավալաթերթի կազմում, բնութագրեր և բացատրական նշումներ նախագծի բոլոր բաժինների համար, ծավալաթերթեր), ներառյալ նախնական ծախսերի նախահաշիվը:

Փուլ 3. Շինարարական աշխատանքների իրականացման տևողությունը պետք է արտացոլված լինի շինարարության աշխատանքների կազմակերպման նախագծում (ՇԿՆ): Նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական վերջնական փաթեթի մշակում ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի համար:

Խորհրդատուն (նախագծի մշակողը) պատասխանատու է հետևյալ աշխատանքների համար.

Նախագծերի բոլոր բաժինների մշակման համար, որն իր մեջ ներառելու է ընդհանուր բացատրական նշումներ և բացատրական գրություններ բոլոր նախագծվող բաժինների համար, ճարտարապետական և հատակագծային լուծումների, կառուցվածքների և կոնստրուկտորական մասի, ջեռուցում և օդափոխություն, ջրամատակարարման և կոյուղու, էլեկտրամատակարարման և ցածրավոլտ ցանցերի, հեռախոսային ցանցի, ներքին կապի, արտաքին ցանցերի (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրաէներգիա, գազամատակարարում), շրջակա միջավայրի պաշտպանություն, բարեկարգում, արտաքին լուսավորության, շինարարական կազմակերպման նախագիծ, լոկալ, օբյեկտային և ամփոփ նախահաշիվների, ամփոփ ծավալաթերթի, նախագծի բոլոր բաժինների բնութագրերի և բացատրագրերի բոլոր բաժինների համար:

Պահանջվող սենյակների կազմը/տարածքների ցանկը ներկայացված է Հավելված 1-ում՝ սենյակների քանակի ու մակերեսի նշումով՝ յուրաքանչյուր կենտրոնի համար:

Բժշկական սարքավորումների տեղադրման և շահագործման համար նախագծում պետք է մշակվեն համապատասխան բաժիններ՝ հաշվի առնելով Հավելված 3-ում նշված սարքավորումների հզորությունները և լարումները:

Պատվիրատուն վերահսկում է ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակացույցը:

Ստորև ներկայացված է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում Խորհրդատուի կողմից կատարվող աշխատանքների մանրամասն նկարագրությունը.

- Խորհրդատուն պետք է մշակի և համաձայնեցնի Պատվիրատուի հետ Արարատի և Արմավիրի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի նախագծման բոլոր լուծումները:
- ՆՆՓ փաթեթը պետք է ներառի Հավելված 2 նշված բոլոր հատվածները/փաստաթղթերը, սակայն անհրաժեշտության դեպքում՝ չսահմանափակվի դրանով:
- ՆՆՓ փաթեթը պետք է ներառի նաև անհրաժեշտ ինժեներական կոմունիկացիաների մոնտաժման նախագծերը՝ համաձայն ստացվող տեխնիկական պայմանների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում էլեկտրական ենթակայանի կառուցման նախագծերի մշակումը: Բոլոր վերոնշյալ գործառույթներն անհրաժեշտ է համաձայնեցնել շահագրգիռ մարմինների հետ:
- Խորհրդատուն պետք է համաձայնեցնի նախագծերը պետական մարմինների և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինների, ՀՀ Առողջապահության նախարարության Առողջապահական պետական տեսչության, համապատասխան քաղաքապետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև ինժեներական արտաքին կոմունիկացիաները՝ «ՀԷՑ» ՓԲԸ, «Վեոլիա ջուր» ՓԲԸ, «Գազպրոմարմենիա» ՓԲԸ և «Տեխնոմ Արմենիա» ՓԲԸ հետ:

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ 2014 թվականի օգոստոսի 9-ի թիվ 110-Ն ՀՀ օրենքի համաձայն, Խորհրդատուն պետք է դիմի ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ հստակեցնելու՝ արդյո՞ք նախագիծը ենթակա է բնապահպանական փորձաքննության, և, եթե այո՝ ապա Խորհրդատուն պետք է բոլոր անհրաժեշտ միջոցառումներն իրականացնի ազգային օրենսդրության համաձայն բնապահպանական փորձաքննություն անցկացնելու ու եզրակացություն ստանալու համար:
- Խորհրդատուն պետք է ներկայացնի ՀՀ Արարատի մարզի «Արարատ» և ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիր» ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի բոլոր բաժինների համար հաշվետվությունները, նախահաշիվները, ճշգրիտ ծավալաթերթերը և մանրամասն մասնագրերը:
- Խորհրդատուն պետք է ներկայացնի նախագծվող հաստատությունների նախագծերի անկախ համալիր քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացություն (համաձայն ՀՀ կառավարության 2014թ. Մայիսի 6 N-711 «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման, որոշման հետ կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով www.arlis.am):

Ե. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերակառուցման փուլում Խորհրդատուի կողմից մատուցվող ծառայությունների մանրամասն շրջանակը ներկայացված է ստորև.

- Շինարարության ընթացքում ապահովել հեղինակային հսկողություն: Խորհրդատուն ներկայացնում է Պատվիրատուին հսկողության վերաբերյալ ամսական գրավոր լիարժեք ամբողջական հաշվետվություններ (հաշվետու ժամանակահատվածում մասնագետների այցելություններ շինհրապարակ, հայտնաբերված շեղումներ նախագծից)՝ համաձայն Քաղաքաշինության կոմիտեի հեղինակային հսկողության մասին 28.09.1998 N143 հրամանի:

Վերակառուցման ընթացքում Խորհրդատուն պարտավոր է.

- Ապահովել վերակառուցման գործընթացի համապատասխանությունը հաստատված աշխատանքային փաստաթղթերին:
- Ապահովել Կապալառուի կողմից իրականացվող շինարարական աշխատանքների մեթոդների համապատասխանությունն աշխատանքային գծագրերին, բնութագրերին, նորմերին:
- Մասնակցել բոլոր ինժեներական համակարգերի փորձարկումներին:
- Անհրաժեշտության դեպքում, փոփոխություններ կատարել աշխատանքային փաստաթղթերում՝ փոփոխությունների վերաբերյալ փորձաքննության եզրակացության տրամադրմամբ (ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան):
- Անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի պահանջով ներկայացնել լրացուցիչ գծագրեր և այլ նյութեր կապված վերակառուցման հետ:

- Մասնաշենքերը շահագործման հանձնելու փուլում պատրաստել և տրամադրել ընդունող հանձնաժողովին թերի կամ չկատարված աշխատանքների ցանկը:

Թերությունները շտկելու ժամանակահատվածի ավարտին Խորհրդատուն պետք է.

- Համոզվի, որ չկան թերություններ և չկատարված աշխատանքներ:
- Ստորագրի մասնաշենքերի շահագործման հանձնման ակտը:
- Պատրաստի վերջնական հաշվետվություն՝ մասնաշենքերի վերակառուցման աշխատանքների ավարտի վերաբերյալ:

Հեղինակային հսկողությունն իրականացվում է վերակառուցման աշխատանքների ամբողջ ընթացքում, ընդհանուր տևողությունը շուրջ 1 տարի՝ վերակառուցման աշխատանքների մեկնարկից սկսած: Հեղինակային հսկողության մեկնարկի ժամկետը կախված է Կապալառուի հետ պայմանագրի կնքման ժամկետներից:

2. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Խորհրդատուն պետք է մշակի և Պատվիրատուին համաձայնեցման ներկայացնի հետևյալ հաշվետվությունները.

- Հեղինակային հսկողությունն իրականացվում է վերակառուցման աշխատանքների ամբողջ ընթացքում, ընդհանուր տևողությունը շուրջ 1 տարի:
- Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի մասնաշենքերի էսքիզային նախագծերի մշակում՝ պայմանագրի ստորագրման օրվանից 30 օրվա ընթացքում: Նախագծերում պետք է հաշվի առնվեն տարածքի ռելիեֆը, տարածքի իրավիճակային պլանը և ֆունկցիոնալ պահանջները:
- Կենտրոնների մասնաշենքերի նախնական կոնստրուկտորական նախագծում (ներառյալ բոլոր հաշվարկները)՝ պայմանագրի ստորագրման օրվանից հետո 2 ամսվա ընթացքում:
- Վերջնական աշխատանքային նախագծերի մշակում, ներառյալ մասնագրեր և բացատրական նշումներ բոլոր բաժինների համար, աշխատանքային հատակագծեր, լոկալ, օբյեկտային, ամփոփ նախահաշիվներ և ծավալաթերթեր՝ պայմանագրի ստորագրման օրվանից 4 ամսվա ընթացքում:
- Խորհրդատուն պետք է ապահովի նախագծերի համաձայնեցումը պետական ու շահագրգիռ մարմինների, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինների, Առողջապահական և աշխատանքի պետական տեսչության, համապատասխան քաղաքապետարանների հետ, ինչպես նաև ինժեներական արտաքին կոմունիկացիաների հետ՝ «ՀԷՑ» ՓԲԸ, «Վեոլիա ջուր» ՓԲԸ, «Գազպրոմարմենիա» ՓԲԸ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ հետ, ինչպես նաև ներկայացնի ՆՆՓ-ի անկախ և համալիր փորձաքննության դրական եզրակացություն պայմանագրի ստորագրման օրվանից 5 ամսվա ընթացքում:

➤ Մշակված բոլոր նախագծերը և հաշվետվությունները պետք է ներկայացվեն թղթային (փաստաթղթերի ճարտարապետական և ինժեներական հատվածները՝ 6 օրինակից, իսկ մնացած նախագծերը՝ 5 օրինակից) և էլեկտրոնային տարբերակներով, ընդհանուր ծրագրային ապահովման կազմով (նախահաշիվները և ծավալաթերթերը Excel ձևաչափով, իսկ աշխատանքային գծագրերը pdf և AUTOCAD ձևաչափով՝ լազերային սկավառակի վրա):

Խորհրդատուն պետք է մշակի և Պատվիրատուին համաձայնեցման ներկայացնի մասնաճյուղերի մասնաճյուղերի բոլոր հատվածների գունավոր 3D մոդելավորումը էլեկտրոնային և թղթային տարբերակներով:

➤ Հեղինակային հսկողության ժամանակահատվածում Խորհրդատուից պահանջվում է երկու մասնաճյուղերի համար կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել ամսական հաշվետվություններ (անհրաժեշտության դեպքում հաշվետվությունները պետք է ներառեն տեղում հանդիպումների արձանագրությունները): Հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն՝ 2 թղթային օրինակով և էլեկտրոնային եղանակով: Վերահսկողության փուլը կսկսվի շինարարական աշխատանքների մեկնարկի օրվա հետ միաժամանակ, և Պատվիրատուն պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Խորհրդատուին:

Է. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Խորհրդատուի առաջարկած թիմը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն որակավորումներին.

- Ծրագրի գլխավոր ճարտարապետ - թիմի ղեկավար (բարձրագույն կրթություն, մասնագիտությունը - ճարտարապետ, 10 տարվա հաստատված մասնագիտական փորձով);
- Ճարտարապետ (բարձրագույն կրթություն, մասնագիտությունը - ճարտարապետ, 5 տարվա հաստատված մասնագիտական աշխատանքային փորձով);
- 2 կոնստրուկտոր (բարձրագույն կրթություն, մասնագիտությունը - ինժեներ-շինարար՝ 5 տարվա հաստատված նախագծման մասնագիտական փորձով);
- Նախահաշիվ կազմող (բարձրագույն կրթություն, մասնագիտությունը - ինժեներ-շինարար՝ 7 տարվա հաստատված մասնագիտական աշխատանքային փորձով);
- Երկրաբան (բարձրագույն կրթություն, մասնագիտությունը - ինժեներ-երկրաբան՝ 10 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով);
- Գեոդեզիստ (բարձրագույն կրթություն, մասնագիտությունը - ինժեներ-գեոդեզիստ՝ 5 տարվա հաստատված մասնագիտական աշխատանքային փորձով);
- Էլեկտրիկ և թույլ հոսանքների մասնագետ (երկուսի կրթությունը՝ բարձրագույն, մասնագիտությունը - ինժեներ-էլեկտրատեխնիկ՝ 5 տարվա հաստատված մասնագիտական աշխատանքային փորձով);
- Ջեոուցման, օդափոխության և օդորակման մասնագետ (բարձրագույն կրթություն, ջեոուցման, գազի մատակարարման և օդափոխության մասնագետ՝ 5 տարվա հաստատված մասնագիտական փորձով);
- Ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետ (բարձրագույն կրթություն, ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետ՝ 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով):

ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի մասնաշենքերի վերակառուցում

Ընդհանուր նկարագրություն

1. Շինարարական աշխատանքների նկարագրություն	Յուրաքանչյուր մասնաշենքի վերակառուցում, տարածքի բարեկարգում
2. Շինարարության նկարագիր	Արմավիր – եռահարկ քարե շինություն՝ նկուղով, շենքի պատերի շարը տուֆ քարից, երկաթ-բետոնե հիմնակմախքով, խողոջային վահանակներով: Արարատ – երկհարկանի քարե շինություն՝ նկուղով, շենքի պատերի շարը տուֆ քարից, երկաթ-բետոնե հիմնակմախքով, խողոջային վահանակներով:
3. Վերակառուցվող տարածք	Արարատ 870.0 քմ * Արմավիր 895.0 քմ*
4. Անհրաժեշտ սենյակների կազմ	Հավելված 1

Նախագծման ելակետային տվյալներ

1. Հողատարածքի անշարժ գույքի սեփականության վկայական
2. Զրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգերի միացման տեխնիկական պայմաններ
3. Տեղեկանք շինարարական աղբի տեղափոխման վերաբերյալ
4. Սենյակների ցանկը համաձայն կից ներկայացված հավելվածի

Ճարտարապետական նախագծի մշակում - գեոդեզիական, անհրաժեշտության դեպքում երկրաբանական հետազոտություններ, գլխավոր հատակագծեր, ճակատներ, հարկերի պլաններ, հատվածներ, պատուհանների և դռների հանգույցներ, պրոֆիլներ, տանիքի հատակագծեր, լանդշաֆտի նախագծման պլաններ, շինարարության մանրամասներ, ինժեներական համակարգերի սխեմաներ, իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ և նախահաշիվ՝ համաձայն նախագծի, աշխատանքների կազմակերպման պլան ու իրականացման ժամանակացույց:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ՀՀ Արարատի մարզի մասնաճյուղ

ՀՀ Արարատի մարզի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղի արդիականացում (վերակառուցման աշխատանքների իրականացում, լաբորատոր բաժանմունքի վերազինում ժամանակակից սարքավորումներով): Արդիականացված կենտրոնը կլինի երկհարկանի շենք՝ շուրջ 870.0 քմ մակերեսով:

Ստորև նշված են «Արարատ» կենտրոնի սենյակների կազմը, քանակը և նշանակությունը:

հհ	Սենյակների կազմը	Քանակը	Նշանակությունը
----	------------------	--------	----------------

Առաջին հարկ Ընդունարան			
1.	Սպասասրահ	1	Շուրջ 25 քմ
2.	Միջին բուժանձնակազմի սենյակ	1	Շուրջ 14 քմ
3.	Հանդերձարան անձնակազմի համար	1	Շուրջ 20 քմ, սանհանգույցով
4.	Անձնակազմի հանգստի սենյակ	1	Շուրջ 20 քմ
5.	Թափոնների հավաքման սենյակ	1	Շուրջ 15 քմ, լվացարանով և հոսակով՝ համաձայն նորմերի
6.	Մաքուր պարագաներ	1	Շուրջ 4 քմ
7.	Պահեստ	1	Շուրջ 18 քմ
8.	Ռեագենտների պահպանման սենյակ	1	Շուրջ 16 քմ
9.	Կեղտոտ պարագաներ	1	Շուրջ 4 քմ
10.	Լաբորատոր նմուշների ընդունման սենյակ	1	Շուրջ 15 քմ
11.	Քիմիական նմուշների հավաքման և տեսակավորման հատված	1	Կազմված 2 սենյակից, շուրջ 25 քմ
12.	Սանհանգույց տղամարդկանց	1	Շուրջ 3 քմ
13.	Սանհանգույց կանանց	1	Շուրջ 3 քմ
14.	Սանհանգույց հաշմանդամների համար	1	Շուրջ 4 քմ
Վարչական մաս			
16.	Գլխավոր բժշկի ընդունարան	1	Շուրջ 10 քմ
17.	Գլխավոր բժիշկ	1	Շուրջ 20 քմ, սանհանգույցով
18.	Բժիշկների սենյակ	3	Ընդամենը 50 քմ
Երկրորդ հարկ Լաբորատորիա			
Լաբորատոր սենյակներ ընդհանուր օգտագործման			
1.	Ախտահանման սենյակ (կեղտոտ ավտոկլավ)	1	Շուրջ 15 քմ
2.	Լվացման և ախտահանման սենյակ	1	Շուրջ 18 քմ
3.	Ախտահանում (մաքուր ավտոկլավ)	1	Շուրջ 15 քմ
4.	Միջավայրերի պատրաստման հատված	1	Կազմված է 3 սենյակից, շուրջ 24 քմ

5.	Պահեստ	1	Շուրջ 10 քմ
6.	Սպառվող լաբորատոր նյութերի պահեստ	1	Շուրջ 8 քմ
7.	Թափոնների հավաքման կետ	1	Շուրջ 4 քմ
ՊՇՌ լաբորատորիա			
8.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
9.	ԴՆԹ / ՌՆԹ անջատում	1	Շուրջ 14 քմ
10.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
11.	Ռեակտիվ խառնուրդների պատրաստման գոտի	1	Շուրջ 14 քմ
12.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
13.	ԴՆԹ / ՌՆԹ ամպլիֆիկացիա	1	Շուրջ 12 քմ
Բակտերիոլոգիական լաբորատորիա			
14.	Սանանցակետ (2 ցնցուղով և 2 հանդերձարանով)	1	Շուրջ 20 քմ, կազմված 2 հանդերձարանից, նախատեսված մաքուր հագուստի (քաղաքացիական) և կեղտոտ (աշխատանքային) հագուստի համար
15.	Բակտերիոլոգիական լաբորատորիա (սերոլոգիական հետազոտություններ)	1	Շուրջ 14 կվ.մ
16.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
17.	Բակտերիոլոգիական լաբորատորիա (աղիքային ինֆեկցիաների ախտորոշում)	1	Շուրջ 16 քմ
18.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
19.	Բակտերիոլոգիական լաբորատորիա (օդակաթիլային եղանակով փոխանցվող վարակների ախտորոշում)	1	Շուրջ 14 քմ
20.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
21.	Սանիտարամանրէաբանական հետազոտությունների համար նախատեսված սենյակ / բակտերիոլոգիա/	1	Շուրջ 20 քմ
Մակարոծաբանական լաբորատորիա			
22.	Նմուշների պատրաստում և հետազոտում, աղային և բուֆերային լուծույթների պատրաստում	1	Շուրջ 10 քմ

24.	Սանիտարամակարուծաբանական հետազոտությունների հմար նախատեսված սենյակ	1	Շուրջ 14 քմ
25.	Սերոլոգիական լաբորատորիա	1	Շուրջ 12 քմ

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ՀՀ Արմավիրի մարզի մասնաճյուղ

ՀՀ Արմավիրի մարզի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղի արդիականացում (վերակառուցման աշխատանքների իրականացում, լաբորատոր բաժանմունքի վերազինում ժամանակակից սարքավորումներով):

Արմավիրի մասնաճյուղի արդիականացված մասնաշենքը եռահարկ շինություն է՝ 870.0 քմ մակերեսով:

Ստորև նշված են Արմավիրի մասնաճյուղի սենյակների կազմը, քանակը և նշանակությունը:

հհ	<u>Սենյակների կազմը</u>	<u>Քանակը</u>	<u>Նշանակությունը</u>
Առաջին հարկ			
Ընդունարան			
1.	Սպասասրահ	1	Շուրջ 25 քմ
2.	Միջին բուժանձնակազմի սենյակ	1	Շուրջ 14 քմ
3.	Հանդերձարան անձնակազմի համար	1	Շուրջ 20 քմ՝ սանհանգույցով
4.	Անձնակազմի հանգստի սենյակ	1	Շուրջ 20 քմ
5.	Կոնֆերանս դահլիճ	1	Շուրջ 20 քմ
6.	Ռեագենտների պահպանման սենյակ	1	Շուրջ 18 քմ
7.	Պահեստ	1	Շուրջ 20 քմ
8.	Թափոնների հավաքման կետ	1	Շուրջ 15 քմ, լվացարանով և հոսակով՝ համաձայն նորմերի
9.	Մաքուր պարագաներ	1	Շուրջ 4 քմ
10.	Կեղտոտ պարագաներ	1	Շուրջ 4 քմ
11.	Լաբորատոր նմուշների ընդունման սենյակ	1	Շուրջ 15 քմ
12.	Քիմիական նմուշների հավաքման և տեսակավորման հատված	1	Բաղկացած է 2 սենյակից, շուրջ 25 քմ
13.	Սանհանգույց տղամարդկանց	1	Շուրջ 3 քմ
14.	Սանհանգույց կանանց	1	Շուրջ 3 քմ
15.	Սանհանգույց հաշմանդամների համար	1	Շուրջ 4 քմ

16.	Պատվաստանյութերի պահպանման հատված	1	Ներառում է 3 սենյակ՝ սառնարանների համար սենյակ՝ 40 քմ, պահեստ և աշխատասենյակ՝ 25 քմ, ընդամենը շուրջ 65 քմ
Երկրորդ հարկ Վարչական մաս			
1.	Գլխավոր բժշկի ընդունարան	1	Շուրջ 15 քմ
2.	Գլխավոր բժիշկ	1	Շուրջ 30 քմ, սանհանգույցով
3.	Սանհանգույց տղամարդկանց	1	Շուրջ 6 քմ
4.	Սանհանգույց կանանց	1	Շուրջ 6 քմ
5.	Հանդերձարան անձնակազմի համար	1	Շուրջ 20 քմ սանհանգույցով
6.	Անձնակազմի հանգստի սենյակ	1	Շուրջ 20 քմ
7.	Սրճարան	1	Շուրջ 30 քմ
8.	Բժիշկների սենյակ	5-6	Շուրջ 102 քմ, յուրաքանչյուրը շուրջ 15-17 քմ
Երրորդ հարկ Լաբորատորիա			
Լաբորատոր սենյակներ ընդհանուր օգտագործման			
1.	Ախտահանման սենյակ (կեղտոտ ավտոկլավ)	1	Շուրջ 15 քմ
2.	Լվացման և ախտահանման սենյակ	1	Շուրջ 18 քմ
3.	Ախտահանում (մաքուր ավտոկլավ)	1	Շուրջ 15 քմ
4.	Միջավայրերի պատրաստման սենյակ		Շուրջ 24 քմ
5.	Պահեստ	1	Շուրջ 10 քմ
6.	Սպառվող լաբորատոր նյութերի սենյակ	1	Շուրջ 8 քմ
7.	Թափոնների հավաքման կետ	1	Շուրջ 4 քմ
ՊՇՌ լաբորատորիա			
8.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
9.	ԴՆԹ / ՌՆԹ անջատում	1	Շուրջ 14 քմ
10.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
11.	Ռեակտիվ խառնուրդների պատրաստման գոտի	1	Շուրջ 14 քմ
12.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
13.	ԴՆԹ / ՌՆԹ ամպլիֆիկացիա	1	Շուրջ 16 քմ
Բակտերիոլոգիական լաբորատորիա			

14.	Սանանցակետ (2 ցնցուղով և 2 հանդերձարանով)	1	Շուրջ 20 քմ, կազմված 2 հանդերձարանից, նախատեսված մաքուր հագուստի (քաղաքացիական) և կեղտոտ (աշխատանքային) հագուստի համար
15.	Բակտերիոլոգիական լաբորատորիա (սերոլոգիական հետազոտություններ)	1	Շուրջ 14 քմ
16.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
17.	Բակտերիոլոգիական լաբորատորիա (աղիքային ինֆեկցիաների ախտորոշում)	2	Շուրջ 18 քմ
18.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
19.	Բակտերիոլոգիական լաբորատորիա (օդակաթիլային եղանակով փոխանցվող վարակների ախտորոշում)	1	Շուրջ 20 քմ
20.	Նախամուտք	1	Շուրջ 4 քմ
21.	Սանիտարամանրէաբանական հետազոտությունների համար սենյակ / բակտերիոլոգիա /	1	Շուրջ 20 քմ
Մակարոօճաբանական լաբորատորիա			
22.	Նմուշների պատրաստում և հետազոտում, աղային և բուֆերային լուծույթների պատրաստում	1	Շուրջ 10 քմ
23.	Սանիտարամակարոօճաբանա կան հետազոտությունների սենյակ	1	Շուրջ 12 քմ
24.	Սերոլոգիական լաբորատորիա	1	Շուրջ 12 քմ

Նախագծային փաստաթղթեր

Յուրաքանչյուր մասնաճյուղի սենյակների քանակը, տեսակը և չափը ներկայացված են Հավելված 1-ում:

ՆԱԽԱԳԾԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՏԵՐԸ՝
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

- Ճարտարապետական նախագիծ
 - Գեոդեզիա
 - Երկրաբանական հետազոտություն
 - Տեխնոլոգիական նախագիծ՝ ինժեներական և տեխնիկական բնութագրերով
 - Կոնստրուկտորական նախագիծ
 - Հիմնական մեքենաների և մեխանիզմների պահանջարկ
 - Էլեկտրատեխնիկական մասի նախագծում
 - Թույլ լարման համակարգերի, ներքին հաղորդակցության և հրդեհային ահազանգի համակարգերի նախագծում
 - Քրամատակարարման և ջրահեռացման ցանցերի նախագծում
 - HVAC համակարգի նախագծում
 - Հրդեհաշիջման համակարգի նախագծում
 - Կայծակից պաշտպանման համակարգեր
 - Ներքին հարդարման նախագծում
 - Արտաքին բարեկարգման նախագիծ
 - Արտաքին ինժեներական համակարգերի նախագծում
 - Անհրաժեշտ ինժեներական ենթակառուցվածքների նախագծում
 - Կահավորման հատակագծերի իրականացում
 - Շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծում, ներառյալ աշխատանքային անվտանգության խնդիրները՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության օրենսդրության, մասնավորապես՝ քաղաքաշինության NIII-4-80 նորմերին և կանոններին համապատասխան, ինչպես նաև Բնապահպանական կառավարման պլանը, որը պետք է մշակվի և կցվի շինարարական աշխատանքների պայմանագրին (աշխատանքային անվտանգության պատասխանատվությունը կրում է շինարարական աշխատանքների Կապալառուն)
- Անհրաժեշտության դեպքում նախագծի և/կամ աշխատանքային փաստաթղթերի լրացուցիչ հավաքածուների մշակում:

Բոլոր գծագրերը պետք է ներկայացվեն AutoCAD և PDF ձևաչափերով

Արարատի և Արմավիրի ՀՎԿԱԿ-ի մասնաճյուղերի մասնաշենքերի բոլոր հատվածների վերաբերյալ տեղեկությունը Խորհրդատուն պետք է մշակի և ներկայացնի տարածական եռաչափ համակարգչային մոդելի ձևով:

Մասնաճյուղերի ճարտարապետական նախագիծ

Մասնաճյուղերի մասնաշենքերը պետք է նախագծված լինեն միջազգային չափանիշների, նորմատիվային փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առաջադեմ բժշկական կենտրոնների պրակտիկային համապատասխան (տես Հավելված 4), ինչպես նաև առաջարկվող սենյակների կազմերին համաձայն (տես Հավելված 1):

Ներկայացվող հատակագծեր

Շինարարական տարածքի տեղանքի հատակագիծ

Պետք է ներառի առնվազն հետևյալը.

-Տարածքի ուսումնասիրություն, ինժեներական կոմունիկացիաների առկայություն և արտաքին գծեր (էլեկտրականություն, ջրահեռացում, դրենաժային համակարգ, հեռախոսային գծեր)

-Գեոդեզիական մաս

-Բոլոր առկա շենքերը

-Առաջարկվող շենքերի գտնվելու վայրը

-Լանդշաֆտային դիզայն, ճանապարհներ, պատեր և այլն

-Տեղանքում ճանապարհների և ավտոկայանատեղերի առկայությունը

-Առաջարկվող ճանապարհներ և ավտոկայանատեղեր

-Բժշկական և այլ թափոնների հեռացման հնարավորության առաջարկ

-Հոսքերի ֆունկցիոնալ տեղաշարժ ու հարահոսության ապահովում

Հարկի հատակագիծ

Պետք է ներառի առնվազն հետևյալը.

-Հարկերի հատակագծում

-Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր սենյակի համար մանրամասն հատակագիծ

-Կահավորման գծագրեր

-Դռների, պատուհանների մասնագրեր

-Սենյակների հարդարման ծավալաթերթեր (ծավալների բացվածքներով) Հարդարման նշումներով հատակագծեր

-Տանիքի հատակագիծ

-Առաստաղների կառուցման հատակագիծ

Սարքավորումների դասավորվածությունը սենյակներում պետք է իրականացվի՝ հաշվի առնելով մատակարարվող սարքավորումները (Հավելված 3):

Ճարտարապետական կտրվածքներ և ճակատներ

Պետք է ներառեն առնվազն հետևյալը.

Շենքերի երկայնական և լայնական կտրվածքներ՝ որոնք ցույց են տալիս բոլոր հարկերի մակարդակները, հարկերի բարձրությունը, տանիքները և այլն: Շենքերի հիմնական կառուցվածքը, ինչպես նաև շենքի բոլոր ճակատների տեսքերը՝ նշելով հարկերի, պատուհանների, տանիքների մակարդակները և այլն:

Շինարարության կազմակերպման նախագիծ

Պետք է ներառի.

- Պետք է նշված լինի անհրաժեշտ հիմնական սարք-սարքավորումների ցանկը:
- Հիմնական աշխատուժի ներգրավվածության կազմակերպումը:
- Առողջության և անվտանգության նորմերի պահպանմանն ուղղված միջոցառումների ցանկը:
- Շինարարական տեխնիկայի շարժի նկարագիրը և աշխատանքի պլանավորումը:
- Տարածքում պահեստների ու աշխատանքային գրասենյակների տեղակայման նշումը:
- Աշխատանքների կատարման մանրամասն ժամանակացույցի մշակումը:

Կոնստրուկտորական նախագիծ

Պետք է ներառի առնվազն հետևյալը.

Նախագիծը պետք է մշակվի երկրաբանական հետազոտության հիման վրա՝ հաշվի առնելով տարածքի սեյմիկ բնութագիրը

-Հարկերի հատակագիծ

- Կտրվածքներ
- Հանգույցներ
- Սյուներ և հեծաններ
- Հիմնային մաս
- Հատակային սալիկներ
- Տանիքի հիմնակմախք
- Միջնապատեր
- Այլ կոնստրուկտիվ տարրեր
- Մանրամասն տեխնիկական պայմաններ
- Մետաղի ծախսերի ամփոփում

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծ

Պետք է ներառի առնվազն հետևյալը.

- Անձրևաջրերի հեռացման համակարգ ըստ պահանջի
- Արտաքին ցանցերի ջրամատակարարման և կոյուղու հատակագծեր
- Ներքին ջրամատակարարում և կոյուղի (հաշվի առնել ջրի կոշտությունը՝ ըստ ստանդարտների և նախագծողի կողմից իրականացված լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքի)
- Տաք ջրամատակարարման ներքին խողովակաշար
- Հրդեհաշիջման ներքին ու արտաքին ցանցերի տեղադրում
- Հատակագծեր, կտրվածքներ ու հանգույցներ
- Աքսոնոմետրիկ սխեմաներ
- Տեխնիկական բնութագրեր

Էլեկտրամատակարարում և ցածր լարման ցանցերի նախագծում

Պետք է ներառեն առնվազն հետևյալը.

- Արտաքին էներգիայի մատակարարման գծեր (անհրաժեշտության դեպքում)
- Արտաքին լուսավորության համակարգ
- Ներքին էլեկտրասնուցման մատակարարման գծեր, լուսավորություն
- Հողանցման համակարգ
- Ենթակայանի նախագծում (անհրաժեշտության դեպքում)
- Ներքին հաղորդակցության գծեր, հեռախոսներ և SS ցանցեր (S<S)
- TV
- Հակահրդեհային ազդարարում
- Կայծակից պաշտպանության համակարգ
- Բոլոր անհրաժեշտ հատակագծերը, սխեմաները և մասնագրերը

Ջերմամատակարարում, գազամատակարարում, օդորակիչ և օդափոխություն

Գծագրերը պետք է ներառեն.

- Տեղական ջեռուցում՝ կենցաղային կաթսաների տեղադրմամբ (հաշվարկով)
- Գազամատակարարում՝ ներքին ցանցեր
- Օդափոխում և վերականգնում՝ ռեկուպերացիա (ողջամիտ գնով)
- Օդորակում
- Բոլոր անհրաժեշտ գծագրերը, սխեմաները և մասնագրերը

Նշում. Հարկավոր է նախատեսել շենքի ջերմամեկուսացում և կիրառել անհրաժեշտ բոլոր խելամիտ լուծումները ու նյութերը շենքի առավելագույն էներգախնայողությունը ապահովելու համար (Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ):

Արտաքին բարեկարգման աշխատանքների նախագիծ

Պետք է ներառեն առնվազն հետևյալը.

- Ճանապարհների, կանաչապատման, պատերի և ցանկապատերի, տեղանքի մուտքի, անձրևաջրերի հեռացման և այլն հատակագծերը
- Արտաքին բարեկարգման մանրամասները
- Նյութերի մասնագրերը

Նշում. Բոլոր նյութերը և հարդարման աշխատանքները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ, ինչպես նաև համապատասխանեն գործող օրենսդրության պահանջներին:

Նյութերի մասնագրերում չպետք է նշվեն կոնկրետ արտադրողներ, իսկ ընտրված մասնագրերը պետք է համապատասխանեն առնվազն 3-4 արտադրողի, որոնք կգտնվեն տարբեր գնային տիրույթներում:

Նախագծում չնշված որևէ աշխատանքներ/հատվածներ, բայց որոնք պահանջում են քաղաքաշինական նորմատիվ իրավական ակտեր՝ պարտադիր են կատարման համար:

Ներքին հարդարման աշխատանքներ

1. Կախովի/Կեղծ առաստաղներ

Ապահովել ARMSTRONG տեսակի կախովի առաստաղներ:

Հատուկ նշանակության սենյակներում և սանհանգույցներում ապահովել առաստաղներ՝ օգտագործելով բժշկական հաստատություններում օգտագործման համար հաստատված նյութեր՝ համաձայն կարգավորող փաստաթղթերի պահանջների:

2. Հատակի ծածկույթներ

Կախված սենյակի նշանակությունից՝ նախատեսել հատակի ծածկույթներ բոլոր սենյակների համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող նախագծման և սանիտարական ստանդարտների պահանջների:

3. Ներքին հարդարման աշխատանքներ

Ներքին հարդարման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող նախագծման և սանիտարական ստանդարտների պահանջներին համապատասխան:

Աշխատանքային սենյակներում ապահովել առնվազն 200 մմ բարձրություն ունեցող աթոռների մակարդակի պաշտպանիչ շերտեր:

4. Նախատեսել շենքերի տեղական ջեռուցման համակարգ

5. Ջերմամեկուսիչ աշխատանքներ

Կատարել շենքի ջերմային հաշվարկ՝ նշելով այն նորմերը, որոնց համար իրականացվել է ջերմային հաշվարկը: Հաշվարկը պետք է կատարվի՝ հաշվի առնելով տեղական կլիմայական պայմանները և, անհրաժեշտության դեպքում, մեկուսացնել շենքի արտաքին պատերը, նկուղի առաստաղը, ձեղնահարկը, ներքին ցանցերի տաք ջրի խողովակները:

6. Դռներ և պատուհաններ

Տեղադրել մետաղապլաստ պատուհաններ՝ նախատեսելով պատուհանների վրա միջատների դեմ ցանցը: Պատուհանի մետաղապլաստ պրոֆիլների լայնությունը պետք է լինի առնվազն 60 մմ, իսկ պատուհանի հատվածների քանակը՝ առնվազն 3: Յուրաքանչյուր սենյակում մետաղապլաստ պատուհանների վրա նախատեսել բարդ փականներ: Մուտքի արտաքին դռան համար նախատեսել այլումինե դռներ ջերմային կամրջով:

Ներքին դռները պետք է պատրաստված լինեն MDF-ից (մանր ֆրակցիա), դռան շրջանակի հաստությունն առնվազն 80 մմ: Մնացած դռները, ինչպիսիք են սանհանգույցների և հատուկ նշանակության սենյակների դռները, պետք է պատրաստված լինեն սպիտակ մետաղապլաստ պրոֆիլներից: Սանիտարական չափանիշներին համապատասխան, սենյակներում տեղադրել պատուհանների շերտավարագույրներ:

7. Լուսավորություն

Հաշվարկել սենյակի լուսավորությունը: Ստանդարտներին համապատասխան անհրաժեշտ լուսավորություն ապահովելու համար նախատեսել ժամանակակից լուսավորող սարքեր էներգաարդյունավետ/էներգախնայող լամպերով՝ համաձայն խորհրդատուի կողմից իրականացված լուսավորման հաշվարկների:

8. Տանիք

Անհրաժեշտության դեպքում տանիքի բոլոր ջրատարների և ջրահեռացման խողովակների սառեցումը կանխելու համար տեղադրել էլեկտրական տաքացուցիչներ կառավարման վահանակով: Անհրաժեշտության դեպքում, պատուհանների վրա արևի լույսից պաշպանիչ հովանոցներ տրամադրել:

9. Թեքահարթակ

Կանոնակարգին համաձայն, սահմանափակ շարժունակություն ունեցող մարդկանց համար մուտքի դռան առջև նախատեսել թեքահարթակ:

10. Ընդունարանի տարածքում հաշմանդամների համար նախատեսել սանհանգույց:

11. Բոլոր սենյակների համար նախատեսել ցուցանակներ և պարագաներ (սենյակների անուններով և համարներով, վթարային ելքերի նշումներով և այլն):

Սարքավորումների նախնական ցանկ

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ						
հհ	Սարքի անվանումը	Արարատ	Արմավիր	Երկու կենտրոնների ընդհանուր քանակը	Նվազագույն պահանջներ (մեկ սարքի հզորությունը)	
					Վոլտ	Վատտ
1.	Կենսասանվտանգության բոքս 2-րդ դաս (A2)	5	5	10	220	700
2.	Քարշիչ պահարան	2	2	4	220	1500
3.	ՊՇՌ բոքս	1	1	2	220	1000
4.	Մաքուր սեղան	1	1	2		
5.	ՊՇՌ անալիզատոր իրական ժամանակում	1	1	2	220	1000
6.	Սառնարան / սառցարան 400լ (+8/-5° C)	2	2	4	220	1500
7.	Սառնարան / սառցարան 250լ (+8/-5° C)	4	4	8	220	1500
8.	Սառցարան (-20/-40° C) 120լ	4	4	6	220	2500
9.	Մանրէազերծիչ տաք-չոր օդային (160-220° C)	2	2	4	220	10000
10.	Բինօկուլյար մանրադիտակ	4	4	8	220	500
11.	ՊՇՌ էկստրակտոր/16 տեղանոց	1	1	2	220	1000
12.	Զրային բաղնիք	1	1	2	220	1000
13.	Թերմոստատ 100լ	5	5	10	220	1000
14.	Թերմոստատ 50լ	3	3	6	220	1000
15.	Արտածծիչ սարք	2	2	4	220	500
16.	Էլեկտրական լաբորատոր այրիչ՝ օդակի ստերիլիզացման համար	5	5	10	220	2000
17.	PH մետր 0-ից 14 չափման միջակայքով՝ ստանդարտ բուֆերների հավաքածուով	1	1	2	220	500
18.	Կոնդուկտոմետր	1	1	2	220	500
19.	Լաբորատոր ցենտրիֆուգա 100-6000 պտույտ/րոպե, 12-15մլ ծավալ ունեցող փորձանոթների համար	4	4	8	220	1000
20.	Լաբորատոր միկրոցենտրիֆուգա 15000 պտույտ/րոպե, ծավալը 1,5-2,0մլ ունեցող 24 փորձանոթի համար	1	1	2	220	1000

21.	Թերմոստատ - ջերմաստիճանի կառավարման տիրույթը 5 ° C-ից բարձր սենյակային ջերմաստիճանից մինչև 120 ° C (ջերմաբլուկ՝ առնվազն 24 բջիջ)	1	1	2	220	
22.	Վորտեկս-ցենտրիֆուգա	2	2	4	220	
23.	Ավտոկլավ	4	4	8	380	12000
24.	Լաբորատոր վացարան (ապակու համար)	1	1	2		
25.	Լվացքի մեքենա	1	1	2	220	1000
26.	Օդի ռեցիրկուլյատոր	8	8	16	220	200
27.	Ջրի թորման սարք	2	2	4	380	9000
28.	Ավտոմատ միկրոպիպետների հավաքածու	5	5	10		
29.	Թայֆուն Ռ-40 («Тайфун Р-40») օդի նմուշառման սարք	1	1	2	220	500
30.	Համակարգիչ	5	5	10	220	500
31.	USB Ֆլեշ կրիչներ	2	2	4		
32.	Անխափան սնուցման համակարգ	5	5	10	220	1000
33.	Էլեկտրաէներգիա արտադրող գեներատոր	1	1	2		
34.	Լաբորատոր կշեռքներ (2 դասի ճգրտության՝ մինչև 0.01 գ դիսկրետությամբ)	2	2	4	220	500
35.	Դենսիտոմետր՝ պղտորություն չափող սարք ըստ ՄակՖարլանդի		1	1	220	100

Ուղեցույցների, նորմերի և կանոնակարգերի ցանկը, որոնց անհրաժեշտ է հետևել ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղերի վերակառուցման ճարտարապետական նախագծման աշխատանքների ընթացքում

Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը մշակելիս անհրաժեշտ է հետևել առնվազն ստորև նշված ուղեցույցներին, հաշվետվություններին և հրապարակված նյութերին.

-Հիվանդանոցային և առողջապահական հաստատությունների նախագծման և կառուցման ուղեցույց (2010 թ. հրատարակություն),

-Ժամանակակից բժշկական հաստատությունների բաժանմունքների վերլուծություն՝ հիմնական սենյակների հաշվարկման մեթոդաբանության և նախագծման գործընթացներ,

-ՄՆԻՊ 2.1.3.2630-10 «Սանիտարահամաճարակային պահանջներ բժշկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար»,

-ՄՆ 118.13330.2012 «Հանրային շենքեր և շինություններ»,

-ՄՆ 158.13330.2014 «Բժշկական հաստատությունների շենքեր և տարածքներ», նախագծման կանոններ,

-Ձեռնարկ՝ առողջապահական հաստատությունների նախագծման վերաբերյալ (կից ՄՆԻՊ 2.08.02-89), բաժին III՝ մասնագիտացված, օժանդակ ստորաբաժանումներ և ծառայողական/կենցաղային շենքեր» (հաստատված է ԽՍՀՄ Առողջապահության նախարարության կողմից 05.25.90),

-ՄՆ 60.13330.2012 (ՄՆԻՊ 41-01-2003) «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»,

-ՄՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և կառույցներ»,

-ՄՆ 131.13330.2012 «Ճարտարապետական կլիմայագիտություն»,

-ՄՆ 6.13130.2013 «Հակահրդեհային համակարգեր: Էլեկտրական սարքեր: Հակահրդեհային միջոցառումներ»,

-ՄՆ 2.13130.2009 «Հակահրդեհային համակարգեր: Հրակայունության ապահովում»,

-Տեխնիկական կանոնակարգեր «Հրդեհային անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգեր»,

-Տեխնիկական կանոնակարգեր «Շենքերի և շինությունների անվտանգության տեխնիկական կանոնակարգեր»,

-ՄՆ 1.13130.2009 «Հրդեհային պաշտպանության համակարգեր. Տարհանման ուղիներ և ելքեր»,

-ՄՆ 5.13130.2009 «Հրդեհային պաշտպանության համակարգեր: Ավտոմատ հրդեհային ազդարարման և մարող սարքեր», նախագծման նորմեր և կանոններ,

- ՀՀՇՆ II-8.04.02-2005-«Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»,
- ՄՆ 30.13330.2012 (ՍՆԻՊ 2.04.01-85*) «Խողովակաշարերի ներքին ցանց և ջրահեռացում»,
- ՄՆ 7.13130.2013 «Ջեռուցում, օդափոխում և օդորակում: Հրդեհային անվտանգության պահանջներ»,
- ՍՆԻՊ II-69-78 «Բժշկական խարգելիչ ձեռնարկատիրություն»,
- ՍՆԻՊ 2.08.08-89 «Հասարակական շենքեր և շինություններ»,
- ՄՆ 59.13330.2016 «Շենքերի և շինությունների մատչելիություն սահմանափակ շարժունակություն ունեցող մարդկանց համար»,
- ՄՆ 52.13330.2016« Բնական և արհեստական լուսավորություն»,
- ՍՆԻՊ 5179-90: Հիվանդանոցների, ծննդատների և այլ բժշկական հիվանդանոցների նախագծման, սարքավորումների և շահագործման սանիտարական կանոններ,
- ՄՆ 31-110-2003 Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրական կայանների նախագծում և տեղադրում,
- ՀՀ «Շինարարական աշխատանքների կլիմայական պայմաններ» նորմերն ու կանոնները:

Ստորև ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում մշակված շենքային ծածկագրերը

- ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն.Նախագծման նորմեր»,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»,
- ՀՀՇՆ IV-11.03.03-2002 Թ-ի «Ավտոկայանատեղեր»,
- ՀՀՇՆ IV-12.02.01-2004 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»,
- ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և շինությունների վերակառուցում, վերականգնում և ամրացում. Հիմնական դրույթներ»,
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
- ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորություն»,
- ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»,
- ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»,
- ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում»,

-ԳՕՍ ISO 14644-1-2017 «Մաքուր սենքեր և հարակից վերահսկվող միջավայրեր»: Մաս 1. Օդի մաքրման դասակարգում,

-ԳՕՍ 30494-2011 «Բնակելի և հասարակական շենքեր. Ներքին միկրոկլիմայի չափսերը»,

-ՀՀՇՆ I-2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար: Հիմնական դրույթներ»,

-ՀՀՇՆ II-8.04.02.-2005 «Շենքերի եվ շինությունների հրդեհային ավտոմատիկա»,

-ՀՀՇՆ IV-11.03.02-2004 (ՄՍՆ 3.02.02-02) «Պահեստային շենքեր»,

-ՍՆԻՊ 2.01.15-90 «Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից»,

-ՍՆԻՊ 2.04.02-84* «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ»,

-ՍՆԻՊ 2.04.03-85 «Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ: Կատարված է փոփոխություն N 1, 2»,

-ՍՆԻՊ 2.04.07-86 «Ջերմային ցանցեր»,

-ՍՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և կառուցվածքներ: Կատարված է փոփոխություն N 1»,

-ՍՆԻՊ 3.05.06-85 «Էլեկտրատեխնիկական սարքավորանքներ»,

-ՎՍՆ 62-91 «Հաշմանդամների ու ազգաբնակչության սակավաշարժուն խմբերի պահանջմունքների համաձայն կենսագործունեության միջավայրի նախագծում»,

-ԳՕՍ 20444-85 Աղմուկ: Տրանսպորտային հոսքեր: Աղմուկի բնութագրերը որոշելու մեթոդներ,

-N2-III-11.3 Սանիտարական նորմեր «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002 թ. N 138 հրամանով,

-N 2.1.7.002-09 Սանիտարական կանոններ և նորմեր «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ», հաստատված ՀՀ Առողջապահության նախարարի 22.12.2009թ. N 25-Ն հրամանով,

- ՀՀՇՆ 52-01՝ «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ»:

Գործող քաղաքաշինության նորմերը և կանոնները պետք է հստակեցվեն պայմանագրի ստորագրման պահին:

